ԻՆՖՈՐՄԱՑԻԱՅԻ ԱԶԱՏՈՒԹՅԱՆ ԿԵՆՏՐՈՆ ՀԿ
ՀՀ, ք. Երևան, Բուզանդի 1/3, 4-րդ հարկ
Հեռ. 560 360
FREEDOM OF INFORMATION CENTER NGO
1/3 Buzand street, 4th floor, Yerevan, RA

02.04.2013թ.
197-ի 3

Հայաստանի ֆոտբոլի
ֆեդերացիայի նախագահ
պարոն Ռուբեն Հայրապետյանին

Տեղեկատվություն ստանալու հարցում

Հարգելի պարոն Հայրապետյան,

Մեզ է դիմել ՀՀ քաղաքացի Աշոտ Մնացականյանը եւ խնդրել է օգնել իրեն տեղեկատվություն ստանալու հարցում: 2013թ.-ի մարտի 26-ին ՀՀ ոստիկանության աշխատակիցները նրան եւ այլ քաղաքացիների արգելել են մուտք գործել մարզաշտ՝ Հայաստան-Չեխիա հանդիպումը դիտելու, թեեւ նրանք ունեցել են Հայաստան-Չեխիա խաղի տոմս: ՀՀ Ոստիկանության պարզաբանմամբ՝ քաղաքացիների մուտքը մարզադաշտ արգելվել է վեճեր թույլ չտալու եւ կարգ ու կանոն պահպանելու նպատակով: Կազմակերպչական հարցերով ՀՀ ոստիկանության աշխատակիցներն առաջարկել են դիմել տոմսերի ստուգմամբ զբաղվող “Արմոբիլ” ընկերությանը:

Ելնելով վերոգրյալից եւ ղեկավարվելով ՀՀ Սահմանադրության 27 և 27.1 հոդվածների և “Տեղեկատվության ազատության մասին” ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի դրույթներով՝ խնդրում ենք տրամադրել հետևյալ տեղեկությունները.

1. Ո՞վքեր կամ ո՞ր կազմակերպությունն է պատասխանատու 2013թ.-ի մարտի 26-ին Հայաստան-Չեխիա ֆուտբոլային հանդիպման տոմսերի ստուգման եւ տոմս ձեռք բերած քաղաքացիների ներկայությունը կազմակերպելու եւ ապահովելու համար,
2. Նախատեսվու՞մ է արդյոք փոխհատուցել վերանշյալ ֆուտբոլային հանդիպման տոմսեր ձեռք բերած այն քաղաքացիների կրած նյութական վնասները, ում արգելվել է մուտք գործել մարզադաշտ,
3. Եթե այո, ապա ո՞վ կամ ո՞ր մարմին է տրամադրելու փոխհատուցում եւ ի՞նչ ընթացակարգով:

“Տեղեկատվության ազատության մասին” ՀՀ օրենքի 9-րդ հոդվածի համաձայն՝ տեղեկություն ստանալու գրավոր հարցմանը պատասխան տրվում է այն ստանալուց հետո 5-օրյա ժամկետում: Ուստի, խնդրում եմ տեղեկություն ստանալու հարցումին պատասխանել օրենքով սահմանված կարգով և ժամկետներում:

Կանխավ շնորհակալ եմ:

ԻԱԿ իրավաբան Գեւորգ Հայրապետյան